

**ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏ  
ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

**ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՄԻԽԱՅԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻԻ  
ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՉԸ  
ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ  
ՍԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Թանկագին բարեկամներ,

Այսօր մենք հրաժեշտ ենք տալիս Վրաստանի արժանավոր քաղաքացի, արդիականության ակնառու գործիչ Գայանե Խաչատրյանին: Նրա ստեղծագործությունը, ինչպես ընտրյալների բաժինն է, միջազգային ճանաչում ձեռք բերեց իր տաղանդով ու ինքնությամբ:

Գայանե Խաչատրյանի անունն առանձնակի թանկ է ու հպարտացնող ինչպես հայ, այնպես էլ վրաց ժողովուրդների համար: Նրա բացառիկությունը ձևավորեցին այս երկու երկրները, նրա ստեղծագործությունն իր սնուցումն ստացել է այս երկու մշակույթների ընդերքից, իսկ նրա կյանքը, անձնական ու քաղաքացիական հատկությունները վրաց եւ հայ ժողովուրդների անկեղծ սիրո, փոխըմբռնման ու բարեկամության պայծառ արտահայտությունն են:

Այսօր Գայանե Խաչատրյանի անունը միանում է Վրաստանում ծնված ու գործող հայ արվեստագետների ողջ համաստեղությանը՝ Բաշինջաղյան, Բաժբեուկ-Մելիքով, Փարաջանով, Ջոտտո (Գ. Գրիգորյան), Դիլբարյան, Բոյախչե... Համոզված ենք, որ վրաց հողում ծնված հայ արվեստագետների ստեղծագործությունները եւ բազմիցս կգեղեցկացնեն այս երկու ժողովուրդների հարուստ մշակույթը:

Կրկին անգամ խորին շնորհակալություն Գայանեին Վրաստանի նկատմամբ այն մեծ սիրո համար, ինչով այդպես հագեցված էր նրա ստեղծագործությունը:

**LAST FAREWELL  
TO GAYANÉ KHACHATURIAN**

**MESSAGE OF CONDOLENCE OF  
PRESIDENT OF GEORGIA  
MIKHEIL SAAKASHVILI  
ON PASSING OF  
GAYANÉ KHACHATURIAN**

Dear Friends,

Today we are bidding farewell to a dear citizen of Georgia, an exemplary activist of modernity, Gayané Khachaturian. Her work, as it is the case with all of the distinguished, has gained international recognition due to her talent and identity.

Gayané Khachaturian's name is especially dear and brings pride to both Armenian as well as Georgian people. Her uniqueness was formed by these two nations. Her work has been nourished from depths of these two cultures, and her life, personal and social attributes, is shining expressions of sincere love, mutual understanding and friendship of Georgian and Armenian people.

Today Gayané Khachaturian's name joins the entire constellation of such Armenian artists as Bashinjaghian, Bajbeouk-Melikov, Parajanov, Jotto (G. Grigorian), Dilbarian, Boyakhch and others, who were born and have created in Georgia. We are convinced that works of Armenian artists born in the land of Georgia will continue beautifying the rich culture of these two nations for yet many-many times.

Once again we thank Gayané for the great love she had for Georgia, of which her creations were so saturated.